ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԻ
(1915-2001 թթ.)

Սույն թվականի օգոստոսի 26-ին Դամասկոսում, 86 տարեկան հասակում, ի Տեր հանգյավ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Գերաշնորհ Տ. Գնել արքեպիսկոպոս Ճերեճյանը:

Հանգուցյալ Սրբազան Հայրը (ավազանի անունով՝ Թովմաս) ծնվել է 1915 թ. Կիլիկիայի Ադանա քաղաքում, վանեցի ծնողների ընտանիքում: Սրբազանի հոր՝ Հովսեփի հորեղբորորդին է եղել Աղթամարի Կաթողիկոս Խաչատուր Շիրոյանը:

Հանգուցյալ Սրբազան Հայրն իր նախնական կրթությունը ստացել է Լավոդիկե (Սիրիա) քաղաքի հայոց Սրբոց Հակոբյանց ազգային վարժարանում:

1928 թվականին ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան, որի քառամյա դասընթացն ավարտելով, 1934 թվականին Թորգոմ Գուշակյան Պատրիարքի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1937 թվականի հունիսին, Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանի ձեռամբ, Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Այնուհետև սկսվում է Սրբազան Հոր եռանդուն հոգևոր գործունեությունը Հալեպի թեմին ենթակա մի շարք շրջաններում մինչև 1941 թվականը, որից հետո, նույն տարում, ընդունվել է Կիլիկյան Կաթողիկոսության միաբանության շարքերը և կարևոր պաշտոններ վարել Կիլիկիո Կաթողիկոսարանում. տպարանի տեսուչ, Անթիլիասի Մայր Տաճարի դպրապետ, դպրեվանքի ուսուցիչ, «Հասկ» ամսագրի

խմբագրական կազմի անդամ և յուրովսանն ջանացել օգտակար լինել Կիլիկյան Աթոռին:

1942-1943 թվականներին հաճախել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի Ս. Գրքի գրականության, Ընդհանուր Եկեղեցու պատմության և երաժշտության դասընթացներին:

1948 թվականին երջանկահիշատակ Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցը նրան շնորհել է ծայրագույն վարդապետական աստիճան, իսկ 1958 թվականին ստացել է եպիսկոպոսական աստիճան:

2001 թվականի փետրվարի 25-ին, կիրակի օրը, Դամասկոսի Ազգային Իշխանության կողմից, ՀԲԸՄ-ի Դամասկոսի ակումբի սրահում, տեղի է ունեցել հոբելյանական ընթրիք-հավաք՝ի գնահատություն Գնել արքեպիսկոպոս Ճերեճյանի քահանայական գործունեության 65-ամյակի:

Գնել արքեպիսկոպոս Ճերեճյանի մահվան առիթով Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հետևյալ հեռագիրն է հղել Դամասկոսի հայոց առաջնորդարան.

«Խոր ցավով և ափսոսանքով ենք տեղեկանում, որ ամսույս 26-ին, կիրակի օրը, կյանքի 86-րդ տարում ի Տեր հանգյալ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Գերաշնորհ Տ. Գնել արքեպիսկոպոս Ճերեճյանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առաջիկա կիրակի օրը, սեպտեմբերի 2-ին, ապա և հանգուցյալ Սրբազան Հոր 40-օրեքի կապակցությամբ կատարելու ենք հեղեսպատարագի հոգեհանգստյան պաշտոն: Հաճեցեք մոտակա որևէ կիրակի տիրախնամ ձեր թեմի առաջնորդանիստ եկեղեցում նույնպես աղոթք բարձրացնել առ Բազումողորմն Աստված՝ Հայ Եկեղեցու բազմերախտ սպասավորի հոգվո հանգստության համար:

Խունկ, աղոթք և բյուր օրհնություն հանգուցյալ Սրբազանի հիշատակին:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք ձեզ քաջառողջ կյանք և արդյունաշատ գործունեություն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
30 օգոստոսի 2001 թ.